ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«16» սեպտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ Մ. Անանյան

ԳԲԽ-95/16 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Լոկատոր» ՓԲԸ-ի 01.09.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Լոկատոր» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Լոկատոր» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 01.09.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ Շիրակի մարզի Հացիկ գյուղական համայնքի կողմից կազմակերպված «ՇՄՀԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 19.08.2016թ. թիվ 1 որոշմամբ ՀՀ, Հացիկի գյուղապետարանի կողմից հայտարարվել է հրավեր (այսուհետ նաև՝ Հրավեր)՝ Հացիկի

գյուղապետարանի կարիքների համար՝ հակակարկտային կայանների տեղակայումով ձեռքբերում:

Ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել «Բարվա» ՍՊԸ-ն և «Լոկատոր» ՓԲԸ-ն:

Ընկերությունը պայմանագրի կատարման համար գնային առաջարկ ներկայացրել է 2 790 000 ՀՀ դրամ, իսկ «Բարվա» ՍՊԸ-ն՝ 2 350 000 ՀՀ դրամ:

Սակայն, «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ վերջինիս կողմից ներկայացված մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը թերի է, մասնավորապես, լրացված չէ մասնակցի կողմից պարտադիր լրացման ենթակա 3-րդ և 4-րդ տողերը՝ ընկերության (վճարողի) և բանկի անվանումները:

Հայտանաբերելով այդ խախտումը՝ «Լոկատոր» ՓԲԸ-ն 31.08.2016թ. գրավոր դիմել է Հանձնաժողովին, հայտնելով, որ հայտի ապահովման վճարման պահանջագիրը թերի է, և այդպիսի խախտման պարագայում «Բարվա» ՍՊԸ-ն 1-ին տեղ զբաղեցնող մասնակից չի կարող լինել, այլ 1-ին տեղ զբաղեցնող մասնակից պետք է ճանաչել «Լոկատոր» ՓԲԸ-ին: Ընդ որում, «Բարվա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը «Լոկատոր» ՓԲԸ-ին տրամադրել են պատճենը՝ բնօրինակից:

Ընկերությունը նշել է, որ անտեսելով վերը նշված խախտումները, Հանձնաժողովը թիվ 2 արձանագրությամբ Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Բարվա» ՍՊԸ-ին՝ որպես ցածր գին ներկայացրած մասնակից:

«Լոկատոր» ՓԲԸ-ն, որպես բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստեր, նշել է, որ Հրավերի «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգը» վերտառությամբ գլխի 3-րդ և 4-րդ տողերի համաձայն՝ վճարման հանձնարարագրում մասնակցի կողմից պարտադիր պետք է նշվեն վճարողի և վճարողի բանկի անվանումները: Սակայն «Բարվա» ՍՊԸ-ի կողմից այդ երկու տողերի պարտադիր լրացվող դաշտերը լրացված չեն եղել:

«Լոկատոր» ՓԲԸ-ն գտնում է, որ Հանձնաժողովը թիվ 2 արձանագրությունը կայացրել է օրենքի խախտմամբ. այդ արձանագրությամբ խախտվել են Ընկերության՝ ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված իրավունքները և օրինական շահերը հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ***«Հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները»:***

Վերը նշված իրավադրույթների մեկնաբանության արդյունքում Ընկերությունը փաստել է, որ հրավերով է սահմանվում Ընթացակարգի մասնակիցների՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները: Մասնակիցները, հիմք ընդունելով հրավերի պահանջները, պարտավոր են հայտերը ներկայացնել հրավերի պահանաջներին, հրավերով պահանջվող փաստաթղթերի ձևին, հրավերով պահանջվող փաստաթղթերի լրացման կարգին համապատասխան:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***«Մասնակիցը հայտով՝ <u>հրավերով սահմանված կարգով ներկայացնում է</u> հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից: Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով»:***

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ***«Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված ... հայտի ապահովումը...»:***

Համաձայն այդ հոդվածի՝ մասնակիցները հայտերը պետք է ներկայացնեն հրավերով սահմանված կարգով և այլ կարգով կամ ձևով հայտ ներկայացնելու իրավունք, ըստ էության, օրենսդիրը չի նախատեսել: Օրենքը նախատեսել է նաև, որ հայտի հետ պարտադիր պետք է ներկայացվի հայտի ապահովում՝ տվյալ դեպում վճարման պահանաջագիր, որը նույնպես պետք է ներկայացվի հրավերի պահանաջներին համապատասխան:

Հրավերի «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգը» վերտառությամբ գլխի 3-րդ և 4-րդ տողերի համաձայն՝ մասնակցի կողմից վճարման պահանաջագրում պարտադիր պետք է լրացվեն մասնակցի և բանկի անվանումները: Սակայն, ինչպես նշվել է, «Բարվա» ՍՊԸ-ի կողմից մասնակցի կողմից

պարտադիր լրացվող այդ տողերը դատարկ են եղել: Վճարման պահանաջագրում վճարողի և վճարողի բանկի տվյալները չլրացնելը հիմք է հանդիսանում մասնակցի հայտը մերժելու համար:

Ըստ «Լոկատոր» ՓԲԸ-ի՝ հայտի ապահովման պարտադիրությունը, կայանում է, նրանում, որ եթե մասնակիցը հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից կամ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը կամ հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, ապա տվյալ դեպքում պատվիրատուն իրավունք է ստանձնում, հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված հայտի ապահովումն, ստանալու հայտի ապահովման գումարը, հակառակ դեպքում մրցույթին կարելի է մասնակցել, հաղթող ճանաչվել և հրաժարվել, որի պարագայում պետական գնումը փաստացի չի իրականացվի, կհետաձգվի հրատապ բավարարման ենթակա պետական կարիքները և որի արդյուքնում պատվիրատուն պարտավոր կլինի լրացուցիչ ծախսեր իրականացնելով հայտարարելու նոր հրավեր: Իսկ այն, որ հայտի ապահովման մեջ՝ վճարման պահանջագրում նշված չէ, թե ով է վճարողը և որ բանկից պետք է իրականացվի վճարումը, ապա այդ փաստաթուղը չի կարող համարվել վճարման պահանջագիր և չի կարող հիմք հանդիսնալ պատվիրատուին ստանալու հայտի ապահովման գումարը:

Օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ***«Սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին»:***

Ընկերությունը նշել է, որ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, մասնավորապես հայտի ապահովումը՝ վճարման պահանջագիրը, չի համապատասխանում Հրավերի պահանջներին, և պետք է «Բարվա» ՍՊԸ-ի հայտը մերժվեր:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ ***«Հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված <u>պայմաններին համապատասխանող հայտերը,</u> հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»:***

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, ինչպես նաև 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը պարտավոր էր <<Բարվա>> ՍՊ ընկերության հայտը մերժել, քանի որ այդ հոդվածի համաձայն՝ հրավերի պահաջներին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման՝ անկախ մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկից:

Գնումները կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ գնումների մասնակցության առաջնահերթ և կարևորագույն փաստաթղթեր հանդիսանում են գնային առաջարկը և հայտի ապահովումը:

Հրավերով, որը կազմվում է գնումները կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ամրագրված է, որ մասնակցի կողմից ներկայացված հայտերում անհամապատասխանություն կամ այլ թերի փաստաթուղթ հայտնաբերվելու դեպքում, այն կարող է մեկ օրվա ընթացում շտկվել, սակայն, ասվածը չի վերաբերում հայտի գնային առաջարկին և հայտի ապահովմանը:

ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» 2011թ. թիվ 168-Ն որոշման հավելված 1-ի 45-րդ կետի համաձայն՝ ***«Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը»:***

Հրավերի 1-ին մասի 7.3 կետը նույնպես պարունակում է վերը նշված որոշման իրակարգավորումները:

Տվյալ դեպքում «Լոկատոր» ՓԲԸ-ն գտնում է, որ այն դեպքում, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա Հանձնաժողովը չի կարող նույնիսկ կասեցնել նիստը և հնարավորություն տալ մասնակցին շտկելու սխալը, այլ պարտավոր է սույն բողոքում նշված իրավադրույթների

համաձայն մերժել «Բարվա» ՍՊԸ-ի հայտը և ՇՄՀԳ-ՊԸԱՊՁԲ-16/01 ծածկագրով Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչեր «Լակատոր» ՓԲԸ-ն:

Անփոփելով վերը շարադրվածը՝ Ընկերություն գտնում է, որ Հանձնաժողովը, չնայած նրան, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից տեղեկացվել է, որ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ **վճարման պահանջագիրը,** չի համապատասխանում հրավերի պահանջներին, այնուամենայնիվ անհիմն, հաշվի չառնելով գնումները կարգավորող օրենսդրության և Հարվերի պահանջները ու չափանիշները, 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել «Բարվա» ՍՊԸ-ին, որը գնումները կարգավորող օրենսդրության կոպիտ խախտում է:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ, 48-րդ և 49-րդ հոդվածների պահանջները՝ «Լոկատոր» ՓԲԸ-ն խնդրել է.

1. Կիրառել ժամանակավոր միջոց՝ կողմերի միջև պայմանագրի կնքումը կասեցնել, քանի որ նույն բողոքում նշված հանգամանքները վկայում են այն, որ մրցույթը կայացվել է գնումները կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, և այն կնքվելու դեպքում կխախտվի Ընկերության իրավունքները, և սույն բողոքի 2-րդ և/կամ 3-րդ պահանջները կդառնան առարկայազուրկ:

2. Չեղյալ հայտարարել թիվ ՇՄՀԳ-ՊԸԱՊՁԲ-16/01 ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրությամբ «Բարվա» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը, որի արդյունքում «Լոկատոր» ՓԲԸ-ին ճանաչել մրցույթի առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. Պայմանագիրը կնքված լինելու դեպքում հայտարարել թիվ ՇՄՀԳ-ՊԸԱՊՁԲ-16/01 ծածկագրով մրցույթն ապօրինի:

2. <u>ՀՀ Շիրակի մարզի Հացիկ գյուղական համայնքի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

ՀՀ Շիրակի մարզի Հացիկ գյուղական համայնքը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 07.09.2016թ. գրությամբ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

Պատվիրատուն առարկել է «Լոկատոր» ՓԲԸ-ի ներկայացրած բողոքի դեմ ամբողջությամբ, քանի որ Ընթացակարգը օրինական է անցկացվել, պահպանված են եղել բոլոր պահանջները, իսկ բողոքաբերի փաստարկները հիմնված են բացառապես տեխնիկական պատճառներով խոտանված պատճենի հիման վրա:

Պատվիրատուն նշել է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովից պահանջել է «Բարվա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը, որը օրենքով սահմանված կարգով նիստի ավարտին «Բարվա» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի բնօրինակից պատճենահանման սարքի միջոցով տրամադրվել է բողոքաբերին, որից հետո, բողոքաբերի ներկայացուցիչները, ըստ էության, ընդունելով Ընթացակարգի բացման նիստի արդյունքները և այն փաստը, որ հանձնաժողովը նախնական տվյալներով մասնակիցների հայտերը համարել է հրավերի պահանջներին համապատասխան, հեռացել են: Այնուհետև, «Լոկատոր» ՓԲԸ-ի ներկայացուցիչը, մի քանի ժամ անց հեռախոսի միջոցով կապ է հաստատել հանձնաժողովի քարտուղարի հետ և հայտնել, թե իբր, պատճենահանված փաստաթղթերից մեկի վրա, մասնավորապես հայտի ապահովման վճարման պահանջադրի վրա, լրացված չեն մասնակցի կողմից պարտադիր համարվող երկու դաշտերը: Միևնույն ժամանակ հանձնաժողովին էլեկտրոնային եղանակով ուղարկվել է այդ պատճենահանված փաստաթղթի լուսապատճենը: Հանձնաժողովը մեկ անգամ ևս ուսումնասիրել է իր մոտ գտնվող նշված փաստաթղթի բնօրինակը և համոզվել, որ այն լրացված է օրենքին համապատասխան, նշված երկու դաշտերը լրացված են եղել ձեռագիր մասնակցի կողմից և ակնհայտ է, որ խնդիրը ընդամենը վատ որակի պատճենահանումն է: Դրանից հետո միայն բացման նիստի արձանագրությունը ուղարկվել է մասնակիցներին էլեկտրոնային եղանակով:

Պատվիրատուն նշել է նաև, որ ուսումնասիրելով բողոքաբերի կողմից ուղարկված լուսապատճենահանված փաստաթուղթը, հստակ երևում է, որ փաստաթղթի որոշ հատվածներ բացարձակապես չեն երևում կամ դժվարընթեռնելի են: Միևնույն ժամանակ ՀՀ Շիրակի մարզի Հացիկ գյուղական համայնքը տեղեկացրել է, որ բացի մասնակից ընկերությունների ներկայացրած փաստաթղթերի պատճենների ծրարները, փակ և կնքված վիճակում, որոնք կարող է տրամադրվել Պատվիրատուի կողմից բողոքը քննող հանձնաժողովին, մնացած բոլոր փաստաթղթերի հետ միասին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պատվիրատուն գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է օրենքի տառին համապատասխան և խնդրել է «Լոկատոր» ՓԲԸ-ի բողոքը մերժել ամբողջությամբ:

3. <u>ԳԲԽ-95/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-95/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Շիրակի մարզի Հացիկ գյուղական համայնքի կողմից հակակարկտային կայանների տեղակայումով ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՄՀԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Բարվա» ՍՊԸ-ն և «Լոկատոր» ՓԲԸ-ն:

2. «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 3-րդ կետի համաձայն՝ վճարող դաշտում վճարողի կողմից պարտադիր լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության:

3. «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 4-րդ կետի համաձայն՝ վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (վճարողի բանկը) դաշտը պարտադիր լրացվում է վճարողի կողմից:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 31.08.2016թ. ժամը 13:00-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Բարվա» ՍՊԸ-ն:

5. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-95/16 բողոքը քննող հանձնաժողովի, 07.09.2016թ. կայացրած որոշմամբ բավարարել է «Լոկատոր» ՓԲԸ-ի միջանկյալ ընթացակարգ կիրառելու վերաբերյալ պահանջը:

6. «Բարվա» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման

պահանջագրի «վճարող» դաշտում նշել է «Բարվա» ՍՊԸ, իսկ «վճարողի բանկը» դաշտում նշել է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ:

3. ԳԲԽ-95/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Լոկատոր» ՓԲԸ-ի 01.09.2016թ. ներկայացրած բողոքը, ՀՀ Շիրակի մարզի Հացիկ գյուղական համայնքի 07.09.2016թ. գրությունը և վերջինիս ներկայացրած փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 3-րդ կետի համաձայն՝ վճարող դաշտում վճարողի կողմից պարտադիր լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության:

«Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 4-րդ կետի համաձայն՝ վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (վճարողի բանկը) դաշտը պարտադիր լրացվում է վճարողի կողմից:

«Լոկատոր» ՓԲԸ-ն բողոքով հայտել է, որ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից լրացված չեն եղել վճարման պահանջագրի 3-րդ և 4-րդ տողերը, մինչդեռ ՀՀ Շիրակի մարզի Հացիկ գյուղական համայնքը Կենտրոնին է տրամադրել Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Բարվա» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի բնօրինակը, որի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերջինս Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս

հանդիսացող վճարման պահանջագրի «վճարող» դաշտում նշել է «Բարվա» ՍՊԸ, իսկ «վճարողի բանկը» դաշտում նշել է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ:

Գտնում ենք, որ «Բարվա» ՍՊԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի թիվ 10 հավելվածով հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագիրը լրացվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Ընկերության 01.09.2016թ. ներկայացրած բողոքը անհիմն է, ուստի առաջարկում ենք «Լոկատոր» ՓԲԸ-ի 01.09.2016թ. բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-95/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան